

33 Սարգիս իսկ գրբէր իւրոց սիրելեաց
Ճառելով նոցա զանձին տագնապաց,
Եւ զերերմանէն եւ զարգելանաց,
Եւ զանբաւ ծախուց եւ զիւր կապանաց:

34 Եւս եւ Յակոբու յայտնէր առանձին
Յոյժ մեղադրանօք զանձկութիւն սրբոին,
Որում յուշ ածէր զօր դատաստանին,
Զանմեղութիւն իւր եւ զըրկանս նորին:

35 Սոյն թուղթ Սարգրսի լալիք մօր նորուն,
Քերցրն արտասուք է՝ ալլոց բանք համբուն,
Կակղեն սակաւ ինչ տարափոյ հանգոյն
Ըզկոշտացեալ սիրտ նախանձու գերւոյն:

36 Ուստի նա անդրէն գրբեալ ծանարտակ
Զեպարբոսն հայցէր զերթ անընդդիմակ,
Թողուլ ըզՍարգիս անշաուշ է՝ արծակ,
Ի քիոս միայն շրջել համարձակ:

37 Սոյն ծանարտակաւ Ղազար եւ Պետրոս
Երթային դարձեալ առ նոյն Եպարբոս,
Որ հաճեալ զ^օնոսս եւ ըզՅակոբոս:
Բանտ կարգէր Սարգսի ըզբոլոր քիոս:

38 Առեալ Յակոբու զայն դիր արբունեաց
Ուղարկէր Սարգսի բնդ հարիւր ոսկեաց,
Որում եւ գրբէր բան ըսփոփանաց
Տալով յոյս զերծման ողջ յիւր կապանաց:

39 Գրբէին նրմա եւ բոյլք ծանօթից
Ըզպէսպէս գրբեանս մըխիթար բանից,
Ու եւ յուսադրիւր յայնց բովանդակից
Փըրկիլ ի մօտոյ յողջոյն արկածից: